

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱՉՅԱ ԱԲԱՂՅԱՆԻ ԱՆՎԱԾ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒ

ԼՈՒՍԻՆԵ ՄԵԼՍԻ ԱՇՈՒՂՅԱՆ

«ԲԱԿԱՎԱՅՐ» ԻՍԱՍՏԱՅԻՆ ԴԱՇԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.01 «Յայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
առենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Նր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գ. Դամբարձումյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Սարգսյան բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Դ. Դիլբարյան
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրու Մ. Խալբանոյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. դեկտեմբերի 21-ին՝ Ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Նր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Դասեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Նր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. նոյեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար  
բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝

Ն. Մ. Միմոնյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴԱՎՈՒՄ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ուսումնասիրության արդիականությունը:** Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է լեզվաբանության մեջ իմաստային դաշտերի տեսությանը մեծ տեղ հատկացնելու և կարևորելու հանգամանքով: Յայ լեզվաբանությունն այս առումով ընդհանուր լեզվաբանության մեջ մշակված մեթոդաբանությունը ստեղծագործաքար յուրացնելու կարիք ունի: Սույն աշխատանքը մի համեստ փորձ է այդ ներքին կարիքն ու պահանջները բավարարելու ճանապարհին: Մյուս կողմից՝ միշտ էլ արդիական է եղել գիտական ուսումնասիրությունները միջգիտական կապերով իրականացնելը: Պայմանավորված սույն աշխատանքի բնույթով՝ նրանում տեղ են գտել լեզվաբանությանը համապատասխան ոլորտներում առնչվող պատմագիտական ու աշխարհագրական որոշ դիտարկումներ, որոնց օգնությամբ հայերենի **բնակավայրի** անվանումների լեզվաբանական քննությունը, մեր կարծիքով, առավել նպատակային է դարձել:

**Ուսումնասիրության նորույթը:** Սույն աշխատանքի նորույթը թելադրված է վերը նշված արդիականության պահանջներից:

**Բնակավայր** իմաստային դաշտի բառերը քննվել են ըստ առանձին ենթադաշտերի, վերջիններս էլ ըստ առանձին շղթաների: Ուսումնասիրվել են դրանց բառակազմական առանձնահատկությունները, ծագումնաբանությունը, իմաստային տեղաշարժերը և իմաստափոխության հիմունքները: Առաջին անգամ փորձ է արվել համադրական բաղադրությունների կառուցվածքը բացահայտել երկու տարբեր տեսությունների՝ եղ. Աղայանի բաղադրական հիմքերի և գ. Զահուկյանի բառակազմության ուսմունքների համատեղմանը:

**Ուսումնասիրության փաստական նյութը:** Ներկա աշխատանքը կատարել ենք՝ հիմք ընդունելով հայերեն բացատրական և արմատական բառարանների ընթերակած լեզվական նյութը: Որոշ քանակությամբ փաստական նյութ ենք քաղել նաև հայոց պատմությանն ու աշխարհագրությանը վերաբերող աշխատություններից, «Յայկական սովետական հանրագիտարանից»: Մեր հաշվումներով՝ **բնակավայր** իմաստային դաշտի բառերի թիվը 253 է, որից 247-ը բաղված են հայերեն բացատրական և արմատական բառարաններից, 6-ը լրացվել են պատմագրական և աշխարհագրական աշխատություններից:

**Ատենախոսության նպատակը:** Կատարելով **բնակավայր** իմաստային դաշտի քննություն նպատակ ենք հետապնդել ներկայացնելու այդ դաշտի համակարգմանի նկարագիրը, այն է՝ ճշգրտել բառերի քանակը, ծագումնաբանությունն ու ստուգաբանությունը, բառակազմությունը, իմաստային տեղաշարժերը, իմաստափոխության հիմունքները: **Բնակավայր** իմաստով բառերն իրենց խորքում պարունակում են ծագումնաբանական, բառագիտական, իմաստաբանական տեղեկություններ, որոնցով դրանք գուտ լեզվական փաստերից

Վերաճում են հայոց պատմության, աշխարհագրության, ազգագրության, ինչպես նաև այլ գիտակարգերի եւկան փաստերի:

### **Ասլենախոսության խմբիրներն են՝**

1) **Բնակավայր** իմաստային դաշտի բառերի ցանկի ճշգրտումը.

2) **Բնակավայր** իմաստային դաշտի իմաստաբանական քննությունը.

3) **Բնակավայր** իմաստային դաշտի բառակազմական քննությունը.

4) Մասամբ նաև **բնակավայր** իմաստային դաշտի ծագումնաբան-ստուգաբանական քննությունը:

### **Ասլենախոսության տեսական և գործնական նշանակությունը:**

Սույն աշխատանքը կօգնի բառագիտության հարցերով գրաղվողներին՝ ամբողջական գաղափար կազմելու **բնակավայր** իմաստային դաշտի բառերի ծագման, բառակազմության, կրած իմաստափոխության, դրա հիմունքների, իմաստային տեխաշարժերի մասին:

**Ուսումնասիրության մեթոդ:** Աշխատանքը հիմնականում կատարված է նկարագրական եղանակով: Երբեմն, անհրաժեշտության դեպքում, դիմել ենք պատմահամեմատական մեթոդի օգնությանը:

**Ասլենախոսության կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է առաջարկություններից, երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից, երկու հավելվածից:

Աշխատանքը քննարկել և պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հր. Աճայանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժինը: Աշխատանքի որոշ դրույթներ ներկայացվել են հանրապետական գիտաժողովներում, մյուսները՝ գիտական հանդեսներում ու ժողովածուներում:

### **Աշխատանքի հիմնական բովանդակությունը**

Ասլենախոսության ներածության մեջ հիմնավորվում է թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, պարզաբանվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվում է **իմաստային դաշտ** հասկացությունը, ներկայացվում է հարցի ուսումնասիրության համառոտ պատմությունը:

## **ԳԼՈՒԽ I ԲՆԱԿԱՎԱՅՐ ԴԱՏԱՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ**

**Բնակավայր** (ընդհանուր իմաստով) հասկացություն արտահայտող բառերը բաժանել ենք իմաստային երեք շղթայի՝ ա) **բնակավայր**, բ) **ծննդավայր**, հայրեմիք, գ) **սփյուռք** անվանող բառեր:

**Առաջին ենթագլխում** քննության ենք ենթարկել **բնակավայր** (ընդհանուր իմաստով) անվանող բառերը: Նախ՝ որոշակի գաղափար ենք տվել նշված հասկացության վերաբերյալ, այնուհետև՝ կատարել ենք համապատասխան անվանումների լեզվաբանական քննություն:

Հայերենում **բնակավայր** անվանող բառերն են՝ **-ապատ, բնակ, բնակալ, բնակավայր, բնակարան, բնակատեղի**, **բնակետոց, բնաշխարհ, բնավայր, բնակություն, շինավայրը, վայր, տեղի**:

Սկզբում կատարել ենք անվանումների բառակազմական քննություն. անդրադարձել ենք բաղադրյալ բառերի բաղադրական հիմքերին, դրանց կազմությանը, բարդությունների հիմքերի ներքերականական հարաբերություններին, բառերում առկա հնչյունափոխական երևույթներին, բաղադրական հիմքերի գործածականությանը<sup>1</sup>: Այսուհետև կատարել ենք ենթաշրայի անվանումների ծագումնաբանական և իմաստաբանական քննություն:

**-Ապատ** և **բնակ** բառերն իրանական փոխառություններ են: **Ապատ**-ն անկախ գործածություն չունի, հանդես է գալիս միայն տեղանունների մեջ, արտահայտում է «չեն, բնակված, մշակված», «(քաղաքների անունների մեջ) շեն, աւան, քաղաք, կերտ» հմաստները: **Բնակ**-ը նախնական հմաստով նշանակել է «բուն բնակիչ, բնիկ քաղաքացի. գաւառական», **բնակավայր**-ի հմաստն ստացել էր բարիմաստի ընդլայնման շնորհիվ, սակայն արդի հայերենում այն կորցրել է:

**Բնակայ** և **բնակություն** բառերը ևս **բնակավայր**-ի հմաստն ստացել են բարիմաստի ընդլայնման հետևանքով: **Բնակալ**-ն ի սկզբանե նշանակել է «մեկի բուն դրած՝ բնակություն հաստատած տեղը, բնակատեղ»: արդի հայերենում ենթարկվել է իմաստների փոխաջորդմանը<sup>2</sup>. իր հիմնական նշանակությամբ արտահայտում է «բնակալ»: **Բնակություն** բառը նախնական հմաստով արտահայտել է «բնակելն. բնակիլն», որից էլ կցորդական զուգորդությամբ առաջացել է **բնակավայր**-ի հմաստափոփոխակը<sup>3</sup>: Արդի հայերենում այդ հմաստով չի գործածվում:

Խմբի համար գերբառույթ<sup>4</sup> հանդիսացող բնակավայր, ինչպես նաև **բնակատեղի** և **բնակետոց** բառերն իրենց բուն, իմնական հմաստով բնակավայր են արտահայտում: Նշված բառերից բնակետոց արդի հայերենում գործածական չեն:

<sup>1</sup> Սեղմագրի ծավալից ելեկով՝ բառակազմական քննությանը չենք անդրադառնում. դրան մանրամասնորեն կարելի է ծանոթանալ ատենախոսության մեջ:

<sup>2</sup> Եդ. Աղայանը **իմաստների փոխաջորդումը** բացատրում է. «....բարի հիմ իմաստի կորուստ, «մահացում» և նոր իմաստի ձեռքբերում, այլ կերպ ասած՝ բարի նախկին իմաստի փոխադրմանը նոր ուղղակի իմաստով» (տես Եդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 380):

<sup>3</sup> Իմաստափոխության հետևանքով ստեղծված բարի նոր իմաստը, որը կարող է արտահայտվել հիմ բառաձևով կամ հնչյունափոխության հետևանքով ստանալ բառային նոր ձև, կոչվում է **իմաստափոփոխակ** (տես Պետրոսյան Շ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարագյուլյան Թ. Ա., Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 119):

<sup>4</sup> Գերբառույթը երկու և ավելի բառույթների չեզոքացման դիրքում հանդես ելող և նրանց միայն ընդհանուր հատկանիշներն ունեցող բառույթն է (տես ԱՐԲԲ, 1, 232):

**Բնաշխարհ, բնավայր, շինամիստ և շինավայր(ք)** բառերը բուն բնակավայր-ի անվանումներ են: **Բնավայր-ն** արդի հայերենում ենթարկվել է իմաստների փոխհաջորդման. ծեղը է բերել նոր հիմնական իմաստ՝ «բուն տեղը, բնական տեղը», իսկ **շինամիստ և շինավայր(ք)** բառերն արդի հայերենի բառապաշտից ընդհանրապես դուրս են եկել:

Դ.-Ե. ծագմամբ **կողմ** (**կողմը**) բառը բազմիմաստ է. իր հիմնական նշանակությամբ արտահայտում է «մի կետից դեպի աջ կամ դեպի ձախ ընկած ճամ»: Լեզվի պատմության ընթացքում ստացել է բազմաթիվ իմաստափոխիչներ, այդ բունը կցորդական գուգորդության հիմն վրա առաջացած **բնակավայր-ի**:

Իրանական ծագմամբ **վայր** և հ.-Ե. ծագում ունեցող **տեղ(ի)** բառերը բուն նշանակությամբ ունեն անորոշ տեղի իմաստ: Երկուսն էլ լեզվի պատմության ընթացքում բարիմաստի ընդլայնում են ստացել: **Բնակավայր-ի** իմաստափոխիչներ, այդ բունը կցորդական գուգորդությամբ, իսկ **վայր-ը** համանշային պայմանավորվածության հիմունքով՝ **տեղ** բարի համարանությամբ:

**Երկրորդ ենթագլխում** քննության ենք ենթարկել **ծննդավայր** և **հայրենիք** հասկացությունների անվանումները: Դրանք հայերենում արտահայտվում են **բինա, բնագավառ, բնօրրամ, ծննդավայր, ծննդաքաղաք, հայրենագավառ, հայրենի, հայրենիք, վաթան, օրդան** բառերով:

Նախ՝ կատարել ենք շղթայի անվանումների բառակազմական քննություն, այնուհետև՝ ծագումնաբանական և իմաստաբանական:

**Բինա** (**բինայի**) և **վաթան** բառերն աշխարհաբարյան շրջանում կատարված փոխառություններ են: **Բինա-ն** ունի հրանական (**buina** «տուն, հայրենիք») կամ թուրքական (**bina** «շինված») ծագում, **վաթան-ը** թուրքական փոխառություն է: Երկուսն էլ արդի գրական հայերենում գործածական չեն:

**Բնագավառ**-ը գրաբարում գործածվել է «բուն գաւառ, հայրենի երկիր, հայրենիք» իմաստով: Արդի հայերենում ենթարկվել է իմաստների փոխհաջորդման. նախնական իմաստը դարձել է իմաստաբանական հնաբանություն:

**Ծննդավայր, ծննդաքաղաք** բառերն աշխարհաբարյան կազմություններ են: Խմբի բառերի համար գերբառոյթ հանդիսացող **ծննդավայր-ն** արդի հայերենում բարիմաստի ընդլայնում է ստացել, իսկ **ծննդաքաղաք-ը** գործածությունից դուրս է եկել:

**Հայրենիք-ի** իմաստ են արտահայտում **հայրենագավառ, հայրենի, հայրենիք** բառերը: Սրանցից նախնական իմաստով **բնակավայր** է անվանում միայն **հայրենագավառ-ը**, որը, սակայն, արդի հայերենում հազվաբեր կիրառություն ունի:

**Հայրենի և հայրենիք** բառերը միևնույն ածականի գրաբարյան եզակիի և հոգնակիի ձևերն են, **բնակավայր-ի** իմաստափոխիչներ ստացել են դեռևս գրաբարում: **Հայրենի-ի** համար այդ իմաստափոխիչները դարձել է իմաստաբանական հնաբանություն, իսկ

**հայրենիք**-ը բարիմաստների փոխհաջորդման է Ենթարկվել՝ դառնալով շղթայի անվանումների համար գերբառույթ:

**Օրրան** և **բնօրրան** բառերը կազմվել են աշխարհաբարյան շրջանում: **Օրրան**-ը նախապես նշանակել է «որորան, օրորոց», հետագայում իմաստների փոխհաջորդման է Ենթարկվել. փոխարերացմամբ առաջացած «ծննդավայր, նախահայրենիք» իմաստափոխիսակը դարձել է հիմնական: Նենց այդ իմաստի հիման վրա էլ բաղադրվել է **բնօրրան** բառը:

**Երրորդ Ենթագլուխում** քննության ենք Ենթարկել **սիյուռք**-ի անվանումները: Որոշակի գաղափար ենք տվել նշված հասկացության վերաբերյալ, այնուհետև կատարել անվանումների քննություն: Դայերենում **սիյուռք** անվանող բառերն են՝ **արտասահմամ, աքսոր(թ), աքսորավայր, աքսորատեղի, գաղթանց, գաղթաշենք, գաղթաշխարհ, գաղթավայր, գաղթարան, գաղթօջախ, գաղութ, պանդիստապայր, պանդիստություն, սիյուռք, օտարաստան, օտարություն**:

**Արտասահման**-ը բուն իմաստով նշանակել է «արտաքյուսահմանի և չափոյ անպայման անչափ»: Աշխարհաբարյում իմաստների փոխհաջորդման է Ենթարկվել. նմանական գուգորդությանը առաջացած «որևէ երկիր, որ գտնվում է տվյալ պետութեան սահմաններից դրւս, օտար երկիր» իմաստափոխիսակը դարձել է հիմնական ինաստ:

Ասորական ծագում ունեցող **աքսոր(թ), (աքսորանք)** բառերը ևս **բնակավայր**-ի իմաստն ստացել են բարիմաստի ընդլայնման հետևանքով, սակայն երկրորդ բառն արդի հայերենում կորցել է այդ իմաստը:

**Սիյուռք** անվանող բառերի մեջ առանձին խումբ են կազմում ասորական ծագում ունեցող **գաղութ** արմատով կազմությունները: Եթե նախորդ արմատով բաղադրված բառերի մեջ առկա է բռնի տեղահանճան իմաստը, ապա այս խմբի բառերն արտահայտում են ինքնական կերպով երկիրը լրելու գաղափար: **Գաղութ**-ն ի սկզբանե նշանակել է «չու. վտարանութիւն. բնակափոխութիւն. փախուստ. գերութիւն. անցք. հատուած», հետագայում կցորդական գուգորդության հիման վրա ստացել է **բնակավայր**-ի իմաստափոխիսակներ՝ «կապիտալիստական երկրների կողմից զավթված և շահագործվող երկիր», «գաղթավայր, այն երկիրը, որտեղ գաղթականները հաստատվել են»: Այս բարից **գաղթավայր** իմաստով բաղադրվել են **գաղթանց, գաղթաշենք, գաղթաշխարհ, գաղթավայր, գաղթարան, գաղթօջախ, գաղթանց** անվանումները: Վերջին բառն արդի հայերենում գործածական չէ:

Իրանական ծագմամբ **պանդուխտ** արմատով են բաղադրվել **պանդիստապայր** և **պանդիստություն** բառերը: Եթե առաջին բառը բուն իմաստով **բնակավայր** է անվանում, ապա **պանդիստապայրանց** բուն իմաստն է «պանդուխտ լինելը, պանդուխտի կյանք վարելը»: **Բնակավայր**-ի իմաստով բառն այժմ չի գործածվում:

**Սիյուռք**-ը գրաբարում կիրառվել է «սփռումն. տարածութիւն. ամենայն վայր կամ կողմն. և Ազգ ցրուեալ» իմաստներով: Արդի

հայերենում բառը Ենթարկվել է իմաստների փոխհաջորդման. կորցրել է նախնական իմաստը, կցորդական զուգորդության հիման վրա ձեռք է բերել նոր հիմնական իմաստ՝ «Դայաստանի Յանրապետությունից դուրս գտնվող հայաբնակ վայրերի ամբողջությունը»: Այն շղթայի բառերի համար գերբառույթ է:

Իրանական ծագմամբ **օտար** արմատով են կազմվել **օտարաստամ** և **օտարություն** բառերը. որոնք այս խմբի իմաստն ստացել են բարիմաստի ընդլայնման շնորհիվ: **Օտարաստամ**-ն արդի հայերենում հազվադեպ կիրառություն ունի:

## ԳԼՈՒԽ II

### ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՐԱՎԱԿԱՑՈՒԹՅԱՎՍ ԱՆՎԱԾՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է պետություն անվանող բառերի քննությանը: Դրանք են՝ **ազգապետութիւն**, **աշխարհ**, **արքայություն**, **երկիր**, **թագավիրություն**, **իշխանություն**, **խանություն**, **կայսրություն**, **հանրապետություն**, **միապետություն**, **պատրիարքություն**, **պետություն**, **սակաւապետութիւն**, **սկզբնապետութիւն**, **տերություն**, **տիրապետություն**:

Աշխատանքի սկզբում կատարել ենք նշված անվանումների բառակազմական քննություն (Վերօնչյալ սկզբունքով), այնուհետև անդրադարձել ենք բառերի ծագումնաբանությանն ու իմաստային տեղաշարժերին: Ստուգաբանական քննությունը հիմնականում ներկայացրել ենք ըստ Հր. Աճառյանի, Գ. Զահուկյանի, Ստ. Մալխասյանցի, Լ. Շովիհաննիսյանի:

**Ազգապետութիւն** գրաբարում կիրառվել է՝ «պետութիւն կամ իշխանութիւն ազգի, ցեղակետութիւն, նախարարութիւն» իմաստով: Արդի հայերենում գործածական չէ:

**Պետություն** (ընդհանուր իմաստով) հասկացությունն արտահայտվում է **աշխարհ**, **երկիր**, **պետություն**, **տերություն** և **տիրապետություն** անվանումներով:

Իրանական ծագում ունեցող **աշխարհ** բառը դեռևս գրաբարում բազմիմաստություն է դրսերել: Բուն իմաստով արտահայտելով «տիեզերք. երկինք և երկիր»՝ բառիմաստի ծյուղավորման հետևանքով ստացել է բազմաթիվ իմաստափոփխակներ, այդ թվում՝ **բնակավայր**-ի՝ «երկելի մասն աշխարհի. գաւառ. նահանգ. թագավորութիւն», ազգ. երկիր հայերենի, կողմն մի տէրութեան. վիլայեթ, էյալեթ»: Աշխարհաբարում սրանց ավելացել են նորերը:

**Երկիր**: Ներկայացրել ենք բառի ստուգաբանությունն ըստ Հովի. Երզնկացու, Գ. Ղափանցյանի, Գ. Զահուկյանի, Էն. Աղայանի և Ա. Մեյեի: Բազմիմաստ բառ է, ընդ որում՝ արտահայտում է **բնակավայր**-ի մի բանի Ենթադաշտերի իմաստներ: Ի սկզբանե նշանակել է «մոլորակ, որի վրա

<sup>5</sup> Գործածությունից դուրս մնացած բառերը ներկայացվել են ավանդական ուղղագրությամբ՝ հաշվի առնելով այն հանգանաճը, որ դրանք, դուրս մնալով արդի հայերենի բառապաշտից, չեն Ենթարկվել ուղղագրական բարեփոխումներին:

ապրում են մարդիկ. երկրագունդ, աշխարհ», հետագայում ստացել է նոր իմաստներ, այդ թվում՝ **բնակավայրի՝ «մի առանձին հողամաս՝ իր բնակիչներով, պետություն»**, «հայրենիք», «գավառ», «արևմտահայաստանցու համար Արևմտահայաստանը»:

**Պետությունը** ենթադաշտի բառերի համար գերբառույթ է: Բազմիմաստ է: Նախնական իմաստով արտահայտել է «պետ գոլն. իշխանական գլխաւորութիւն. տէրութիւն և առաջնորդութիւն յոր և է կարգի»: Արդի հայերենում բարհմաստների փոխհաջորդման է ենթարկվել. իհմնական է դարձել «պետություն, երկիր» իմաստը:

**Տերություն և տիրապետություն** բառերը **պետություն** իմաստն ստացել են կցորդական գուգորդության հիման վրա: Սրանցից **տերությունը** արդի հայերենում իմաստների փոխհաջորդման է ենթարկվել. պետություն իմաստը դարձել է իհմնական:

Պետական կառավարման համակարգից ելնելով՝ տարբերվում են պետության հետևյալ ծևերը՝ **համրապետություն, միապետություն, սակաւապետութիւն**:

**Համրապետությունը** գրաբարում գործածական չի եղել, որովհետև չի եղել համապատասխան կառավարման համակարգ ունեցող պետություն: Բուն իմաստով նշանակում է «պետական կառուցվածքի ծև, որի ժամանակ գերազույն իշխանությունը պատկանում է բնակչության կողմից որոշ ժամանակով ընտրված մի անձի կամ մի խումբ անձանց կամ օրգանների»: Սրանցից կցորդական գուգորդությամբ առաջացել է «այդպիսի վարչական ծև ունեցող պետություն» իմաստափոխիսակը:

**Միապետություն** հասկացությունն արտահայտվում է **աշխարհակալություն, արքայություն, թագավորություն, իշխանություն, խամություն, կայսրություն, միապետություն** անվանումներով:

**Աշխարհակալություն, արքայություն, թագավորություն, իշխանություն, խամություն, կայսրություն բառերն իրենց բուն իմաստով արտահայտում են համապատասխանաբար «աշխարհակալ լինելը», «արքա լինելը», «թագավոր լինելը», «իշխան լինելը», «խան լինելը», «կայսր լինելը»: Եթզի պատմության ընթացքում դրանք բարիմաստի ընդլայնում են ստացել: **Պետության** իմաստն ստացել են կցորդական գուգորդության հիման վրա:**

**Միապետությունը** բուն իմաստով նշանակում է **պետություն**:

**Սակաւապետութիւնը** գործածվել է գրաբարում՝ «պետութիւն կամ իշխանութիւն սակաւաթիւ իշխանաց» իմաստով: Արդի հայերենի բառապաշտից դուրս է եկել՝ համապատասխան հասկացության վերացման պատճառով:

**Կրոնական իմաստով պետություն** են արտահայտում **պատրիարքություն** «այն երկիրը, որ գտնվում է մի պատրիարքի հոգևոր տեսչութեան տակ» և **մկրնապետություն** «գլխաւոր պետութիւն. վերագոյն դասակարգութիւն կամ զարդ երկնայնոց» բառերը:

### ԳԼՈՒԽ III

#### ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԿՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՌՈՒՄՆԵՐԸ

Այս ենթադաշտը բաժանել ենք չորս շղթայի՝ ա) **Երկրի (պետության)** մասի անվանումներ, բ) **քաղաքի և հարակից հասկացությունների** անվանումներ, գ) **գյուղի հասկացության** անվանումներ, դ) **քաղաքի և գյուղի միջև միջամկյալ դիրք գրավող բնակավայրի** անվանումներ:

**Առաջին ենթավխում** քննության ենք ենթարկել **Երկրի մասի անվանումները**: Այդ բառերը պայմանականորեն բաժանել ենք Երկու ենթաշղթայի՝ 1) **տիրող երկրների վարչատարածքային միավորների** անվանումներ, 2) **Դայաստաճի վարչատարածքային միավորների** անվանումներ: Բաժանման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Դայաստաճը պատմական ճակատագրի բերումով հաճախ կորցրել է իր պետականությունը կախման մեջ ընկեննով այս կամ այն երկրից, երբեմն էլ մեծ ջանքերի գնով կարողացել է վերականգնել այն: Գտնվելով որևէ երկրի տիրապետության ներքո՝ մեր երկիրը ենթարկվել է տվյալ տերության վարչատարածքային բաժանմանը, դարձել նրա վարչատարածքային մեկ միավոր և, բնականաբար, կրել այդ միավորի անվանումը: Իսկ անկախությունը վերականգնած ժամանակ Դայաստաճի վարչատարածքային բաժանումը կատարվել է ինքնուրույնաբար երկրի սեփական օրինաչափություններից ելնելով:

**Առաջին ենթաշղթայում** քննության ենք ենթարկել **տիրող երկրների վարչատարածքային միավորների** անվանումները: Դրանք են՝ ամիրայություն (ամիրություն), բեկություն, բեյլերեյություն, գաղլգա, դիոցեզ, դրսություն, եպառքի, եպարքություն, երկրամաս, էպէր, էնիրություն, թեն, թուման, խալիֆայություն (խալիֆաթ), ժայրանարզ, կազա, կատապանություն, կուսակալություն, ճարակ, մահալ (միայա), մարզպանություն, մարկիզություն, մելիքություն, նահիե, շահր, պրեֆեկտուրա, պրովինցիություն, պրովինցիա, սանջախ(կ), վիլայեթ, սաստրապություն, (սաստրապնություն), ստրատօգիա, ուլուս, փաշայություն, քորայ, քուսակ, օկրուց:

Սեր կողմից ընդունված կարգով սկզբում կատարել ենք այդ բառերի բառակազմական, այնուհետև՝ ծագումնաբանական և իմաստաբանական քննություն: Սեղմագրի ծավալից ելնելով նպատակահարմար ենք գտնում ենթաշղթան ներկայացնել ընդհանուր գծերով:

1. Խմբի բոլոր բառերը (կամ՝ բառարմատները) փոխառություններ են՝ բացառությամբ **Երկրամաս** բառի, որը բաղադրվել է հայերեն բաղադրիչներով:

2. Դրանք գործում են եղել միայն այն ժամանակաշրջաններում, երբ Դայաստաճը գտնվել է այս կամ այն երկրի գերիշխանության տակ, ուստի այդ բառերի կրած իմաստափոխություններն ել վերաբերում են հենց տվյալ ժամանակաշրջաններին: Ազատագրվելուց հետո Դայաստաճում դադարել են գոյություն ունենալ հանապատասխան վարչատարածքային միավորները և, բնականաբար, դրանց անվանումները: Պատահական չեն, որ խմբի բառերն արդի հայերենում

կամ դարձել են պատմաբառեր, կամ ընդհանրապես դուրս են մնացել հայերենի բառապաշտից:

3. Այս ենթաշղթայում հանդիպում են բառեր (**գաղզա, ղիոցեզ, թեյերքեյություն, ղիոցեզ, կատապանություն, շաիր, պրեֆեկտուրա և այլն**), որոնք ընդհանրապես արձանագրված չեն հայերեն բառարաններում, քանի որ նշված վարչատարածքային միավորները գոյություն են ունեցել մեր լեզվի պատմության նախագրային շրջանում, իսկ գրային շրջանում այլևս չեն եղել:

4. Ենթաշղթայի անվանումներում հանդիպում են բառատարերակներ, այսպես՝ **սատրապություն – սատրապետություն, եպարքի – եպարքություն, եմիրություն – ամիրություն – ամիրայություն, սանչակ – սանչափ, մահալ – միալ** և այլն:

5. Բուն, հիմնական իմաստով **բնակավայր** են նշանակում գաղզա, ղիոցեզ, եպարքի, թեմ, քուման, մահալ(միալ), նահիե, պրովինցիա, սանչափ(կ), վիայեր, ուլուս, քուսակ անվանումները, իսկ մնացած բառերն այդ իմաստն ստացել են բարհմաստի ճյուղավորման հետևանքով: **Բնակավայրի** իմաստ են արտահայտում վերջններին՝ կցորդական գուգորդության հիման վրա առաջացած իմաստափոխակները:

**Երկրորդ ենթաշղթայում** քննության ենք ենթարկել **Դայաստանի վարչատարածքային միավորների** անվանումները: Ենթաշղթան հայերենում ներկայացվում է **աշխարհ, աշխարհամեջ, աշխարհայր, աշխարհիկ, բարձրագավառ, բրեշխութիւն, գանձագինք, գավառ, գավառակ, գաւառամեջ, գունդ, լեռնագավառ, ծայրագավառ, ծայրամաս, կալվածք, կողմն, հարթագավառ, ծորագավառ, մարզ, նախարարություն, նահանգ, նահանգագանություն, շրջան, պարզնականք, վերնագավառ, վերնակողմն, տուն, քսակագինք** անվանումներով:

**Աշխարհ** բառին անդրադարձել էինք **պետության** անվանումները ներկայացնելիս: Միայն ավելացնենք, որ այն գրաբարում արտահայտել է նաև **երկրի մաս-ի** իմաստ: Բանն այն է, որ ներ պատմիների կողմից որոշակի տարբերություն չի դրվել **աշխարհ** և **գավառ** հասկացությունների միջև, հաճախ դրանք հիշատակվել են կողքի, թեև տարածքային առօնուվ տարբեր հասկացություններ էին արտահայտում<sup>6</sup>: Այս բառով են կազմվել **աշխարհամեջ** «միջին վայր աշխարհի, երկիր, քաղաքի, հրապարակ, հրապարակական» և **լեռնաշխարհ** «լեռնոտ երկիր, լեռնային գավառ» անվանումները:

**Բրեշխություն** բառի արմատը իրան. փոխառություն է: **Բրեշխությունը** գրաբարում գործածվել է «կուսակալութիւն, կողմնակալութիւն, հիւպատոսութիւն, հիւպատութիւն» իմաստով:

<sup>6</sup>Տես Թ. Յակոբյան, Յայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Եր., 1968, էջ 15-120:

**Բնակավայրի** իմաստն ստացել է կցորդական գուգորդությամբ: Արդի հայերենում բառը դարձել է հնաբանություն:

**Գավառի** ծագումը հստակեցված չէ: Յր. Աճայշանն այն համարում է «կովկասեան կամ խալդեան ընտանիքից փոխառեալ բառ», իսկ Գ. Զահուլյանը հավանական է համարում բառի հ.-Ե. ծագումը<sup>7</sup>: Գրաբարում նշանակել է «նահանգ. Աշխարհ առանձինն. Երևելի մասն ինչ Երկրի կամ տէրութեան, ուր են քաղաքք և գիւղը. կողմն աշխարհի. մանաւանդ հայրենի Երկրի. որպէս թեմ կամ իշխանութիւն Եպիսկոպոսի»: Դայոց լեզվի պատմության ընթացքում բարիմաստի ընդլայնման է ենթարկվել: Արդի շրջանում բարիմաստի նեղացմանը առաջացել է նաև «բնակավայրի անուն Դայաստանի Դանրապետությունում» իմաստափոխիխակը:

**Գավառից** կազմվել են **բնակավայր** արտահայտող **բարձրագավառ** «բարձր դիրք ունեցող գավառ, լեռնադաշտ», **գավառակ** «վարչական գավառի ստորաբաժանում, մասը», **լեռնագավառ** «լեռնային գավառ, լեռնոտ շրջան, լեռնավայր», **ծայրագավառ** «մի Երկրի կամ պետության ծայրին, այսինքն՝ սահմանի մոտ գտնված գավառ, մարզ» և այլ բառեր:

Թ. Դակորյանը նշում է. «Նախարարությունների տիրապետության տակ գտնվող կալվածքները, բացի հարևան նախարարություններից զենքի ուժով ծեռք բերվածներից, ըստ ծագման երեք տեսակի են՝ ժառանգաբար անցնող կալվածքներ, որ ներ մատենագործության մեջ կոչված է **հայրենականք**, որանով ծեռք բերվածներ՝ **քսակագինք** կամ **գանծագինք** և սյուզերենի (թագավորի) կողմից ծառայությունների հանար պարզեվածներ՝ **պարզևականք**»:<sup>8</sup> Դանապատախան հասկացություններ վերացման պատճառով նշված բառերն արդի հայերենի բառապաշարից դուրս են մնացել:

Իրանական ծագում ունեցող **գունդը** որևէ կապ չունի **գունը** «կլոր» բառի հետ: Յր. Աճայշանը նշում է, որ «բանակաթեմ, զինվորական գավառ» իմաստով գործածված է նի բանի աշխարհագրական ծների մեջ»<sup>9</sup>:

**Ծայրանառ** գրաբարում նշանակել է «ծայրագաւառ», արդի հայերենում բարիմաստի ընդլայնում է ստացել: ննանական գուգորդությամբ ստացել է նոր իմաստներ, այդ թվում **բնակավայրի** «որևէ պետության կենտրոնից շատ հեռու ընկած, այդ պետությանը պատկանող սահմանամերձ Երկիր՝ Երկրանաս», «բնակավայրի արվարձան, բնակավայրի սահմաններում գտնվող մաս», «ընդհանրապես մայրաբաղարից հեռու ընկած վայր»:

**Կայված(թ), շրջան** և **նախարարություն** բառերը ևս Երկրի մասի իմաստը ձեռք են բերել բարիմաստի նյուղավորնան հետևանքով:

<sup>7</sup> ՂԱԲ, 1, 527-528 (համառոտագրությունները տես ատենախոսության մեջ):

<sup>8</sup> Տես ՂԼԴ, ՆԺ, էջ 383-384, էջ 551, ՂԱԲ, 153:

<sup>9</sup> Թ. Դակորյան, նշվ. աշխ., էջ 117-118:

<sup>10</sup> Տես ՂԱԲ, 1, 595:

**Նախարարություն** արդի հայերենում կորցրել է **Երկրի մասի** իմաստափոխակը, գործածվում է «մինիստրություն» իմաստով:

**Կողմ(Ո)-ը** գրաբարում ունեցել է **Երկրի մասի** իմաստ: Արդի հայերենում այն դարձել է իմաստաբանական հնաբանություն:

Իրանական ծագմամբ **մարզ** բառը բուն իմաստով **Երկրի մաս** է անվանում: Խորհրդային շրջանում բառը դարձել էր հնաբանություն, այժմ՝ «վերակենուացել է»: Մարզերը համարվում են ՀՀ վարչատարածքային միավորներ:

Ներկայացրել ենք **նահանգ** բառի ծագումն ըստ Յր. Աճառյանի, Ստ. Մալիսայանցի և Գ. Զահուլյանի: Բառը բուն իմաստով **բնակավայր** է նշանակում: Գրաբարում գործածվել է «գաւառ կամ Երկիր նախարարութեան, կամ նահապետական, և բդեշխական. կուսակալութիւն» իմաստներով: Արդի հայերենում բարիմաստի ընդլայնման է ենթարկվել:

Բնիկ հայերեն **տուն** բառը նախնական իմաստով նշանակում է «յարկ. շինուած բնակութեան՝ որմնապատ՝ յարկածածկոյք՝ բաժանեալ ի սենեակս՝ դրանք և պատուհանիւր»: Յայոց լեզվի պատմության ընթացքում ստացել է բազմաթիվ իմաստափոխակներ, այդ թվում **բնակավայր-ի՝** «լայն մտքով՝ նախարարական կալուած իր բնակիչներով», «Երկիր, աշխարհ իր բնակիչներով»: Արդի հայերենում ավելացել են **բնակավայր** արտահայտող նոր իմաստափոխակներ՝ «մարդու մշտական բնակավայրը (հայերենի օյլուր, քաղաքը, Երկիրը)», (փիք.) «գյուղ՝ քաղաք կամ Երկիր, որպես բնակիչների ընդհանուր կացարան՝ օջախ»:

**Երկրորդ ենթագիտում** քննության ենք ենթարկել **քաղաք-ի և հարակից հասկացությունների** անվանումները:

**Քաղաք** հասկացությունը հայերենում արտահայտվում է աթոռանիստ, աթոռավայր, աթոռ-քաղաք, առաջնորդանիստ, ասսուածաքաղաք, աւանդ, բանդար, բերդաքաղաք, ծայրաքաղաք, մայրաքաղաք, մեծաքաղաք, մետրոպոլիս, միստ, նորաքաղաք, նաստց, շահաստան, շատ, ոստան, պալատ(Յ), ոստաստակ, վերնաքաղաք, վերնաքաղաքանայր, ուրաք, քաղաք, քաղաքաբերդ, քաղաքանայր, քաղաքանուր, քաղաքանի, քաղաքանիստ, քաղաքավայր, քաղաք-արքանյակ, քաղաքիկ, քաղաքիկնեար, քաղաքուիկ(թ) անվանումներով:

Կատարել ենք **քաղաք** արտահայտող բառերի բառակազմական, այնուհետև՝ ծագումնաբանական և իմաստաբանական քննություն:

Ներկայացրել ենք **քաղաք-ի** ծագումն ըստ ՆՐ-ի, Յր. Աճառյանի, Գ. Զահուլյանի:

Բառը բուն իմաստով **բնակավայր** է անվանում և շղթայի համար գերբարությ է: Գրաբարում գործածվել է «բնակութիւն բազմութեան մարդկան իր քաղելոյ ժողովելոց ի մի վայր. շինուած բնակութեանց՝ բաժանեալ ի տունս և ի հրապարակս. և ներքին հսկ բնակիչք» իմաստով, հետագայում բարիմաստի ընդլայնում է ստացել:

**Քաղաք-ը** կենսունակ է բառակազմորեն. բաղադրել է **բնակավայր** արտահայտող **քաղաքանիստ** «քաղաքի ննան բնակության տեղ»,

**քաղաքավայր** «վայր քաղաքի, քաղաքամէջ, կողմն մի քաղաքի», **քաղաք-արքանցակ** «տարածականորեն ինքնուրույն, բայց վարչատնտեսական տեսակետից ավելի խոշոր քաղաքի կազմի մեջ մտնող քաղաքատիպ բնակավայր», **քաղաքիկ** «փոքրիկ քաղաք», **քաղաքուիի** «փոքր քաղաք՝ մեծ քաղաքի մոտ կամ քաղաքացուիի», **քաղաքամայր, մայրաքաղաք**և այլ կազմություններ:

Իրանական ծագում ունեն **քանդար** և **-շաս** բառերը: **Քանդար-ը**, ինչպես նաև հունական ծագում ունեցող **πιράφ-ը**, ըստ Աճայշանի, նորագուտ բառեր են՝ միայն մեկ անգամ գործածված մատենագրության մեջ<sup>11</sup>: **Ծառ-ը** հայերենում առանձին գործածական չէ. պահպանված է միայն մի շարք հին տեղանութենի կազմում **Արտաշատ, Երվանդաշատ, Զարիշատ, Ծամշատ, Վասակաշատ** և այլ կազմություններ:

Երկրի կամ նահանգի գիշավոր քաղաք են անվանում **աթոռամիստ, աթոռավայր, աթոռ-քաղաք, աւանդ, մայրաքաղաք, մեծաքաղաք, մետրոպլիս, միստ, նատոց, շահաստան, ոստամ, պալատ(ն) ոտոսաստակ, քաղաքամայր** բառերը:

**Աթոռամիստ, աթոռավայր, աթոռ-քաղաք, աթաջնորդամիստ** անվանումներն ստեղծվել են մեր լեզվի աշխարհաբարյան շրջանում:

Իրանական ծագում ունեցող **աաանդ-ը** և **ոտոսաստակ-ը** նորագուտ բառեր են երկուսն էլ երկու անգամ գործածված մատենագրության մեջ<sup>12</sup>:

**Մայրաքաղաք-ն** ավելի ուշ է կազմվել, քան քաղաքամայր-ը: Այն ստեղծվել է հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից<sup>13</sup>: **Քաղաքամայր** բառն արդի հայերենում հաճապվում է հնարանություն, գործածվում է նիայն բարձր ոճում:

**Մեծաքաղաք-ը** գործածական է եղել միայն մեր լեզվի հին շրջանում:

Յունական ծագմանք մետրապոլիս-ը, որ նշանակել է «մայր երկիրը կամ պետութիւնը իւր գաղութի նկատմամբ», արդի հայերենում գործածական չէ:

**Նիստ և նատոց** բառերը «մայրաքաղաք» իմաստն ստացել էն գրաբառում բարինաստի ճուղավորման հետևանքով: Արդի հայերենում էրկու անվանումներն էլ բարինաստի ընդլայնում են ստացել:

Իրանական ծագմանք շահաստան (շահիստան) և ոստամ բառերը բուն իմաստով արտահայտել են «մեծ կամ բազաւորական քաղաք, նահանգի կամ գաւառի կենտրոնական քաղաքը»: Արդի հայերենում երկու անվանումներն էլ բարինաստի ընդլայնում են ստացել:

**Կրոնակաման նշանակությամբ մայրաքաղաք** իմաստն արտահայտվում է աստուածաքաղաք «աստուածային կամ սրբազն ու աստուածապահ քաղաք», **նորաքաղաք** «որպես նոր քաղաք. այն է

<sup>11</sup>Տես ՀԱԲ, 1, 407, ՀԱԲ, 3, 618:

<sup>12</sup>Տես ՀԱԲ, 1, 354, ՀԱԲ, 3, 307, ՀԱԲ, 99, ՀԱԲ, 4, 146-47, ՀԱԲ, 4, 164, ՀԼՊ, ՆԺ, 542, ՀԱԲ, 658, L. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 88 :

<sup>13</sup>Տես ՀԼՊ, 2, էջ 146:

սեպիական անուն Վաղարշապատ քաղաքի», **վերմաքաղաք** «վերին քաղաք. վերին Երուսաղէմ կամ Սիոն յերկինս», **վերմաքաղաքանայր** «վերին մայրաքաղաք. վերին քաղաք՝ մայր ստորինս Երուսաղէմի. Երուսաղէմ վերին» անվանումներով:

**Քերդաքաղաք** հասկացություն են արտահայտում **բերդաքաղաք** «բերդաւոր քաղաք. քաղաք ամուր», **ծայրաքաղաք** «բերդաքաղաք. բերդ ի ծայր քաղաքին. ամորց. ակառն», **քաղաքաքերդ** «բերդաքաղաք. քաղաք բերդաւոր կամ բերդանանան. ամուր», **քաղաքամուր** «ամուր՝ ամրացրած քաղաք. բերդաքաղաք» բառերը:

**Քաղաքի** հարակից հասկացությունները բաժանել ենք չորս ենթաշերայի: 1) **քաղաքի հարակից տարածքների** անվանումներ, 2) **քաղաքի առանձին մասերի** անվանումներ, 3) **քաղաքը շրջապատող ամրությունների** անվանումներ: 4) **ճամապարհի** անվանումներ:

**Քաղաքի հարակից տարածքները** ներկայացվում են արծակավայրք, արվարձան, արուարձաննեայք, բացատ, բուրաստան, հանգրվան, մոտաքաղաք, պրաստին, քաղաքադրուրս բառերով: Դրանցից բուն նշանակությանը նշված իմաստն են արտահայտում արծակավաղաք, արվարձան, արուարձաննեայք, մոտաքաղաք, պրաստին, քաղաքադրուրս բառերը, արծակավայր(թ)-ը, բացատը, հանգրվանը և բուրաստանը այդ իմաստն ստացել էին բարիմաստի ճյուղավորման հետևանքով՝ կցորդական գուգորդության հիման վրա: արդի հայերենում այն կորցրել են: Լեզվի պատմության ընթացքում բառապաշտից դուրս են եկել **արուարձաննեայք, մոտաքաղաք, պրաստին** անվանումները:

**Հանգրվան և բուրաստան** բառերն ունեն իրանական ծագում, պրաստինը՝ հունական, իսկ **արվարձանի** ծագումը հստակեցված չէ:

**Ներկայացրել ենք քաղաքի առանձին մասերի** անվանումները, այնուհետև **քաղաքի մաս** արտահայտող բառերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքն ի սկզբանե ունեցել է «ամրացված տեղ կամ բերդ» նշանակությունը՝ բննության ենք ենթարկել նաև **քաղաքի ամրություն** անվանող բառերը:

Քաղաքի (մնդիանրապես ցանկացած տիպի բնակավայրի) հետ է կապվում **ճամապարհ** հասկացությունը, որը ներկայացրել ենք ենթագլխի չորրորդ մասում:

**Երրորդ ենթագլուխը** նվիրված է **գյուղ** անվանող բառերի ըննությանը: **Գյուղը** ոչ քաղաքատիպ բնակավայր է, որտեղ գբաղվում են գլխավորապես երկրագործությամբ և անասնապահությամբ: Այն առաջացել է մինչդասակարգային հասարակագույն, որի ժամանակ հիմնականում եղել է արյունակացական միավորում, տոհմական համայնք:

**Գյուղ** հասկացությունը հայերենում արտահայտվում է **ագորակ**, **առիծ**, **գիւղաստաննեայք** (գեղաստաննեայք, **գեօղաստեայք, գեօղաստայք**), **գյուղ**, **գյուղախումք**, **գյուղակ**, **գյուղաստան**, **գյուղորդայք**, **գյուղորեք**, **լեռնագյուղ**, **ծորագյուղ**, **ոշլաղ**, **շեն**, **շենատեղ(ի)**, **շինատեղ(ի)**, **շինավայր** անվանումներով:

**Ազարակ-ը** փոքրասիական-փոյուգական փոխառություն է:

Բազմինաստ բար է: Բուն իմաստով նշանակել է «գետին բացօթեայ նշակեալ, ուր արտորայք են և սակաւ բնակուի. որ և անդաստան, անդ. արտեր», հետագայում բարիմաստի ընդլայնմամբ ստացել է նոր իմաստներ: Արդեն գրաբարում գործածվել է նաև «գիտ. աւան» իմաստով: Արդի հայերենում բարիմաստի նեղացմամբ ստացել է «բնակավայրի անուն ՀՅ-ում» իմաստափոփոխակը:

**Ալիծ (արինճ, առինց)** բարի ծագումը հստակեցված չէ: Բառը մեր լեզվի հին շրջանում արդեն դադարել էր ինքնուրույն գործածություն ունենալուց և վերածվել էր բնականվանակազմական ձևույթի՝ մասնակցելով **Գուկարիծ, Լուսաքարիծ, Խոլկարինճ, Կրառինճ, Զիրառիծ, Մլմառինճ, Բագառիծ** տեղանունների կազմությանը: Այն բարիմաստի նեղացման հետևանքով դարձել է գյուղանում **Ալիծ** և **Դարիծ** ծևերով:

Ներկայացրել ենք **գյուղ** բարի ծագումն ըստ Գ. Ղափանցյանի և Գ. Զահորյակյանի: **Գյուղ-ը** խնդի բառերի համար գերբառույթ է:

Գրաբարում գործածվել է հետևյալ նշանակությամբ՝ «գեւը, կամ գեաւը, գեօլ, շեն, աւան. բնակութիւն ի վայրս անդաստանաց, հանդերձ ազգարակօք և անդէռվք»: Աշխարհաբարում բարիմաստի ընդլայնում է ստացել. փոխանականական և փոխաբերական կիրառությունների հետևանքով ստացել է նոր իմաստներ:

**Գյուղ-ով** բաղադրվել են գյուղակ «փորբիկ գյուղ», **լեռնագյուղ** «լեռնային գյուղ», **ծորագյուղ** «ծորում գետեղված գյուղ» բառերը:

Թուրքական ծագում ունեցող **Դշլաղ (Դշլայ)**-ը աշխարհաբարյան շրջանում կատարված փոխառություն է: Ունի «միջինասիհական հանրապետություններում գյուղի՝ ավանի անվանում» իմաստը: ՀՅ Վանաձոր քաղաքի թաղամասերից մեկը ժողովրդախոսակցական լեզվում կոչվում է **Դշլաղ** (այժմյան Տավոս թաղամասը):

Իրանական ծագմամբ **շեն** (<շէն>) բարը գրաբարում նշանակել է «աւան. գեղ»: Աշխարհաբարում բարիմաստի ընդլայնման է ենթարկվել: Արդի հայերենում գրական լեզվում դադարել է «գյուղ» իմաստով գործածվելուց և վերածվել է բնականվանակազմական ձևույթի: Դրանով բաղադրվել են նաև **բնակավայր** արտահայտող **շինավայր, շինատեղի** «շէն» բնակված տեղ, շինանիստ, շինավայր», **շենատեղի** «գյուղատեղ, այն տեղը, որտեղ գյուղ է եղել կամ պետք է կառուցվի» բառերը:

**Գյուղի կենտրոնական մասը** արտահայտվում է **գյուղամեջ, շինատեղ** բառերով:

**Գյուղերի հավաքական ամբողջությունը** հայերենում ներկայացվում է **գեղորեք, գիւղաստամեայք** (գեղաստամեայք, գեօլաստայք, գեօլաստայք), **գյուղախումք, գյուղաստան, գյուղորայք, գյուղորեք** անվանումներով:

**Չորրորդ ենթագլխում** կատարել ենք **քաղաքի և գյուղի միջև** **միջանլյալ դիրք գրավող բնակավայր-ի** անվանումների բնություն:

**Գյուղաբարյար-ը, քաղաքագյուղ-ը** միջնադարյան Հայաստանում եղել են քաղաքատիպ բնակավայրեր: Դրանք առաջանում էին ամրոցների մոտ, սակայն կարող էին նաև ամրոցի մերձակայքում չլինել: Գյուղաբարյաների բնակչությունը հիմնականում զբաղվում էր

Երկրագործությամբ, մասամբ նաև արհեստներով և առևտով։ Արհեստներն ու առևտուրը գյուղաքաղաքում ունեին սահմանափակ ծավալ և բավարարում էին իր և շրջակա գյուղերի պահանջները։ Ի տարբերություն քաղաքների՝ դրանք սովորաբար պարսպով շրջափակված չէին լինում<sup>14</sup>։

Ինչպես նշում է Բ. Արաքեյանը, **գյուղաքաղաք և քաղաքագյուղ եզրույթները եղել են հոմանիշներ և երբեմն գործածվել են միևնույն բնակավայրի համար։ Այսպես, Կողը Յովհաննես կաթողիկոսի պատմության մեջ մի տեղ կոչվել է **գյուղաքաղաք**, մի տեղ՝ **քաղաքագյուղ**, մի այլ տեղ՝ **դաստակերտ**։ Հ դարից հետո **քաղաքագյուղ** եզրույթը գործածությունից դուրս է եկել, և գործածական է դարձել **գյուղաքաղաք-ը**։ Մի քանի փոքր քաղաքների համար գործածվում էր նաև **դաստակերտ-ը**, որը նշան էր նրանց արքունական պատկանելության<sup>15</sup>։**

**Գյուղաքաղաք** հասկացությունն արտահայտվում է **ավան**, **արկ**, **արծակքաղաք**, **աւանացուղ**, **աւանաշեն**, **գյուղավան**, **գյուղաքաղաք** (**գեղաքաղաք**), **դաստակերտ**, **ծեռակերտ**, **քաղաքավան**, **քաղաքագյուղ** (**գեօղ**, **գեղ**) անվանումներով։

Ընդունված կարգով՝ կատարել ենք ենթաշղթայի բառերի բառակազմական, այնուհետև ծագումնաբանական և իմաստաբանական քննություն։

Ըստ Բ. Արաքեյանի՝ **ավան-ը** համեմատաբար խոշոր բնակավայր էր՝ առաջացած երկրագործական կարևոր գավառի կամ ավելի ներ շրջանի կենտրոնում։ Իրու կանոն՝ ավանները գոյացել են Յայաստանի տնտեսապես առավել կարևոր երկրագործական գավառներում, որտեղ կային արգավանդ հողեր, զարգացած երկրագործություն և խիտ բնակչություն<sup>16</sup>։

Ներկայացնել ենք **ավան** բառի ծագումն ըստ Յր. Աճառյանի, Գ. Զահուլյանի, Գ. Ղափանցյանի, Լ. Յովհաննիսյանի։

Գրաբարում բառը գործածվել է «գիւղ մեծ քաղաք փոքր կամ անպարհսաց գիւղաքաղաք քաղաքագիւղ» իմաստով։ Արդի հայերենում բարիմաստի ներացմամբ առաջացել է «բնակավայրի անուն Յայաստանում» իմաստափոփոխակը։ Բառը կենսունակ է բառակազմական առումով։ Յայաստանի Յանրապետությունում դրանով բաղադրվել են վարսունութ բնականուններ՝ **Ազգարակավան**, **Արագածավան**, **Արաքսավան**, **Արտաշատավան**, **Գեղամավան**, **Լծավան**, **Նարթավան**, **Ղազարավան**, **Օհանավան** և այլն։

**Արկ** բառը ունի իրանական ծագում։ Յր. Աճառյանը նշում է, որ այն նորագյուտ բառ է, որ մեկ անգամ է գործածվել Ուրիայեցու կողմից<sup>17</sup>։

<sup>14</sup> Տես ՐՍԴ, 3, 134։

<sup>15</sup> Տես Արաքեյան Բ., Քաղաքները և արհեստները Յայաստանում IX-XIII դդ., հ. I, Եր., 1958, էջ 121-127։

<sup>16</sup> Տես նույն տեղում։

<sup>17</sup> Տես ՐԱԲ, 1, 322։

Արդի հայերենում նույնպես գործածական չէ:

**Դաստակերտ-ն** իրանական բաղադրյալ փոխառություն է: Բուն իմաստով նշանակել է «ձեռքով շինված. շեն, ազարակ. ավան»:  
**Քնակավայր-ի** իմաստն արդի հայերենում կորցրել է:

Մեր կարծիքով՝ **ծեռակերտ-ը** կազմվել է **դաստակերտ-ի** համարանությամբ: Նախնական իմաստով նշանակել է «ձեռօք կերտեալ ինչ. գործ ձեռաց. ստեղծուած», որից կցորդական զուգորդությամբ առաջացել է «դաստակերտ. գիւղ. աւան. քաղաք» իմաստափոփոխակը: Արդի հայերենում այդ իմաստը դարձել է իմաստաբանական հնարանություն:

**Գյուղաքաղաք** հասկացություն են արտահայտում նաև կազմությամբ բարդ **արծակաքաղաք** «չպարսպած քաղաք», **աւանագիլ** (*գեոյի*), **աւանաշէն** «մեծ գիւղ կամ փոքր քաղաք (անորոշ նշանակութեամբ)», **գյուղավամ** «գյուղատիկ ավան, ավանատիկ գյուղ», **գյուղաքաղաք** (*գեղաքաղաք*) «քաղաքագյուղ, գյուղաքաղաք, ավան», **քաղաքավան** «քաղաքատիկ ավան», **քաղաքագյուղ** «փոքր քաղաք, որ քաղաքին հատուկ վարչական հիմնարկներ չունի, մեծ գյուղ, ավան» բառերը: Սրանցից **աւանագիլ** (*գեոյի*), **աւանաշէն**, **արկ**, **արծակաքաղաք** բառերը դուրս են եկել արդի հայերենի բառապաշարից:

### Եզրակացություններ

Աշխատանքում, քննության առնելով հայերենում **քնակավայր** իմաստային դաշտի անվանումները, սահմանազատել ենք հետևյալ ենթաշւերը՝

1. **քնակավայր** հասկացության անվանումներ, որոնք իրենց հերթին դասակարգվել են հետևյալ իմաստային շղթաներում՝

1.1. **քնակավայր** անվանող բառեր.

1.2. **հայրենիք, ծմնուավայր** անվանող բառեր.

1.3. **սիյուռք** անվանող բառեր.

2. **պետության** անվանող բառեր.

3. **պետության վարչատարածքային միավորների** անվանումներ, որոնք դասակարգել ենք չորս շղթայի՝

3.1. **պետության (երկրի) մաս-ի** անվանումներ, որոնք բաժանվում են երկու ենթաշղթայի՝

3.1.1. **տիրող երկրների վարչատարածքային բաժանման միավորներին համապատասխանող** անվանումներ.

3.1.2. **Նայաստամի վարչատարածքային միավորների** անվանումներ.

3.2. **քաղաք-ի և հարակից հասկացությունների** անվանումներ.

3.3. **գյուղ-ի** անվանումներ.

3.4. **քաղաքի և գյուղի միջև միջամկյալ դիրք գրավող քնակավայր-ի** անվանումներ.

Փորձել ենք բացահայտել յուրաքանչյուր իմաստային շղթայի անվանումների բառակազմությունը, ծագումնաբանությունն ու

ստուգաբանությունը, լեզվի պատմության ընթացքում դրանց կրած իմաստային տեղաշարժերն ու իմաստափոխության հիմունքները:

Ի մի բերելով **բնակավայր** իմաստային դաշտի անվանումները, դրանց բառակազմական, ծագումնաբանական և իմաստաբանական քննության արդյունքները՝ հանգում ենք հետևյալին.

1. **Բնակավայր-ի** 253 անվանումներից 78-ը ունեն պարզ կազմություն, 81-ը ածանցումներ են, 92-ը՝ բարդություններ, ընդ որում բուն բարդություններ են՝ 89-ը, կցական՝ 3-ը: 2 անվանումներ հարադրական բաղադրություններ են:

1.1. Բարդությունների բաղադրական հիմքերի միջև կիմնականում առկա է ստորադասական հարաբերություն, որում սերող հիմքը հանդիս է գալիս որպես կախյալ, բաղադրող հիմքը՝ կախորդ եղու: Այլ կերպ ասած՝ դրանք բուն հայկական բարդություններ են:

1.2. Բոլոր ածանցումները վերջածանցավոր են՝ բացառությամբ՝ արտասահման բարի: Դրանք բաղադրվել են՝ **-ակ**, **-ան**, **-անց**, **-արան**, **-իկ**, **-ոց**, **-ություն**, **-ք**, ինչպես նաև հավաքական նշանակություն հաղորդող **-որայք**, **--(ա)ստան**, **--(ա)ստանեայք**, **աստայք**, **-որեք** և այլ վերջածանցներով: Սրանցից հաճախականությամբ հատկապես աչքի է ընկնում **-ություն**, որով կերտված անվանումները **բնակավայր-ի** իմաստն ստացել են կցորդական զուգորդությամբ, իսկ **-աստայք**, **-աստեայք**, **աստանեայք**, **-որեք** ածանցներով բաղադրությունները արդի հայերենի բառապաշտից դուրս են եկել:

1.3. Բաղադրությունները կազմվել են ինչպես առաջնային, այնպես էլ՝ երկրորդային հիմքերով, այլ կերպ ասած հանդիպում են և առաջնային, և երկրորդային բաղադրություններ:

1.4. Բաղադրական հիմքերում գերակշռում են գոյական բաղադրիչները, որոնք համընկնում են ուղղական հոլովածելին: Բաղադրական հիմքերում առկա են նաև ածականներ, բայարմատներ և մակրայներ:

2. **Բնակավայր** անվանող բառերի ծագումնաբանական քննությամբ պարզվել է, որ առկա են՝

2.1. Բուն **հ.-ե.** ծագում ունեցող արմատներ, որոնք 9-ն են:

2.2. 71 բառ փոխայլ են: Սրանցից 34-ը իրանական փոխառություններ են, 11-ը՝ հունական, 6-ական՝ ասորական և թուրքական, 5-ը՝ արաբական, 3-ական՝ լատինական և ռուսական, 2-ը՝ ասուրական, 1-ը՝ ֆրանսիական:

2.3. Առկա են չստուգաբանված, հստակորեն ծագումն ու պատկանելությունը չբացահայտված 11 անվանումներ:

3. Քննության ենթակաված բառերից բուն **բնակավայր-ի** անվանումներ են շուրջ 130-ը, որոնցից հայոց լեզվի պատմության ընթացքում բարիմաստի ընդլայնում են ստացել 24-ը, 5-ը ենթակաված են բարիմաստի նեղացման, 12-ը հանալու են հնաբանությունների շարքը, իսկ 50-ից ավելի անվանումներ ընդհանրապես դուրս են եկել արդի հայերենի բառապաշտից:

4. Շուրջ 110 անվանումներ բնակավայրի իմաստը ծեռք են բերել բարիմաստի ճյուղավորման հետևանքով: Դրանցում բարիմաստի ընդլայնման հիմք են դարձել տարբեր իրողություններ՝ համեմատությունը, արտաքին և ներքին նմանությունը, փոխաբերաբար գործածությունը և այլ հատկանիշներ: Սրանցից 14-ը հետագայում կորցրել են բնակավայրի իմաստը, իսկ մոտ 10-ը դուրս են եկել արդի հայերենի բառապաշտից:

5. 170-ից ավելի անվանումներ արդի հայերենին ավանդվել են գրաբարյան շրջանից, որոնցից մոտ 40-ը այժմ գործածական չեն:

6. Մոտ 90 անվանումներ կազմվել են աշխարհաբարում: Սրանցից 18-ը արդի հայերենում ստեղծված բաղադրություններ են: Աշխարհաբարյան շրջանում ստեղծված անվանումներից արդի հայերենի բառապաշտից դուրս են մնացել 13-ը:

#### Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. **Գյուղ** իմաստային դաշտը հայերենում, Բանբեր ՎՊՄԻ, գիտական աշխատություններ, Վանաձոր, «Իրավունք», 2008, էջ 91-99:

2. **Քաղաք** հասկացության բառանումները հայերենում, Նամրապետական երիտասարդական գիտաժողովի նյութեր՝ նվիրված ՎՊՄԻ-ի հիմնադրման 40-ամյակին, Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2009, էջ 41-52:

3. **Պետություն** հասկացության բառանվանումները հայերենում, գիտական հոդվածներ (բանասիրություն), Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2009, էջ 212-224:

4. **Բնակավայր** հասկացության բառանվանումները հայերենում, գիտաժողովի նյութեր, Բ (հասարակագիտական պրակ), Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2011, էջ 119-133:

## Àøðãäýí Ëóñèíå Íåëüñíâíà

Ñáìàíðè:åñéíå ííéå "Måñòîæðåéüñòå" á àðìýíñéíì  
ÿçûêå

Ãèññåððåöðý íà ñíèñéàíèå ó-åííé ñòåéäíè  àðìýíñéíì  
ðééíäé÷åñéèõ íàðé ìí ñíåöðæéüíñòå  
10.02.01- "Àðìýíñéèé ÿçûê".

Çàùèòå ñíñòåíðèõ 21.12. 2012å. á 15.00 ÷. íà çáññåäíèè  
ñíåöðæéçèðíâäíííäí ñíñåðå ïò лингвистике 019 BAK  
Иíñòåðòå ÿçûêå èì. Åð. Å-àðýíå Íåöðíäéüííé Áéàäåíèè  
Íàðé ÐÀ (0015, Åðåâàí, óé. Åðèäíðå Ëóñåâíðè÷à 15)

### Ðåçþìå

Â ìèðoåííí ýçûéíçíàíèè íáíèí èç äíñòåðí÷íí ðíðíñí  
èçò÷åííñòå ðåçåäéíå ëéíäåñéòå ÿâéýåðñý ðåíðøý  
ñíàíðè:åñéíäí ííéý. Â ýðíí ïðíñòåíèè àðìýíñéíà  
ëéíäåñéòå ïðíñòå ðåíðøý á ðåíðøåñéíí ïñåííàíèè óñå  
ðåçðååíðåíííé íåðííàíéíäéè íåñåäíí ÿçûéíçíàíèý.

Ãáííàý ðååíðå ëíåäå ðåéü ðåðü êíííéåñííå  
íièñåíèå ñíàíðè:åñéíäí ííéý **íñåéäííñé** iðíéð á  
àðìýíñéííí ÿçûêå, á ëíåííí ííðåäåéòðü ñíèñííé ñéíå,  
ååíåäéíäéþ è ýðéííéíäéþ, ñéíåííåðåçíàíèå,  
ñíàíðè:åñéèå (ñíñéíåñå) èçíåíåíèý è íåðåíåñåíèý,  
ñíííåñå èçíåíåíèé.

Ãèññåððåöðý ñíñòåíðè òç áåâåäåíèý, ðòåð ãéåå,  
çåééþ÷åíèý è ñíèñåà èñííéüçíåäíííé ëèðåðåðòðñü. Â  
éàæäíí èç áéåå áúiiéíåíå ðååíðå ëí ðòåííí  
aspektam:

а) ñíèñåíðåçíåäåéüííå èññéåäåíàíèå, êíðíñíå  
åúiiéíåíí ñíñíñíåíí ñíåíåäåðåçíåíäí ñíñåíñåíèý áåðò  
ðåçéè÷íñòå ðåíðéé: ðåíðéè ñíñòåðåñüñòå ñíñíå Ýä. Áååäýíà è  
ñéíåííåðåçíåäåéüííåíííé õ-åíèý. Å. Äæåðéýíà;

á) ååíåäéíäé÷åñéíå è ýðéííéíäé÷åñéíå  
èññéåäåíàíèå, áúiiéíyý êíðíñíå ìú ðóéíåñéíñòåñéèñü  
óñåå ñóñåñòåðþùèí ó-åíèåíí ëí ïðéííéíäéè ïðíñéååéäííñòå  
àðìýíñéèõ è çåðåååéíñòå ÿçûéíçíåíàíèé;

â) ñíàíðè:åñéíå ñíñéåäåíàíèå, íàïðååéåíííå íà  
èçò÷åíèå èçíåíåíèé ñíàíðè:åñéèõ ñíñíåíííå

Â áåâåäåíèè íáíñííåñåååðñý íåíåöíäéíñòå  
íåð÷ííäí òçò÷åíèý ðåíðü, ííýñíýþðñý ðåééè è çååå÷è  
èññéåäåíàíèý, óéåçûåååðñý íà íåíåöíäéíñòå  
ðååíðå á àðìýíñéííí ÿçûéíçíàíèé, ååååðñý êðåðéåý  
èññéåäåíàíèý ååííñåíí åííðíñå, ííðååååéýåðñý ðåééæå  
ííýðéå ñíàíðè:åñéíäí ííéý ñéíå, íåíçíå÷åþùèõ

*iāññāéáíiúé ióíéò è èõ êëäññèõèëàöëý ii iääðöiiäì è çåâíüyì â àðìýíñèëîí üçûêå.*

їаððäääý äéäååä iinñäýüåäia ènñëääiâäièþ ñeiâ n iauñeì  
çia+äièäi, âuñðäæäþüèi iïiyöðeå ianñäéäiíüé ióïeô.  
Ääiíóþ iïääðöiio iu ðäcääåéèëe ia ððe çåâäia. A iäðäai  
iïäðäçääëå åuñiïéèëe ðäaâiðo iî ènñëääiâäièþ çia+äièÿ  
iïiyöðeþ ianñäéäiíüé ióïeô; aî âðiñði - iðåâññðåâæäiù  
nëiâa, âuñðäæäþüèå iïiyöðeþ ianñðiðixäåäièr è ðiäæiâa; a  
ððåðüäi çåäëåââe iäðâðeëññü ê ènñëäâiâièþ ðäcïuð  
iäeiaâiâiâièé iïiyöðeþ äeâññiðða. Nëiâa, iðiññyüeâññü ê  
iïñëââiâe aðöiia, yäeþþöñþ iâiðuñeieâiíe +aññðüþ  
nëiâaðiññi cäiâñña aðiñyññi ÿçüñâ, ð.e. ia iðiñðyþâièë  
ââeâiâ iäøa ñðoðâiâ iïäââðäaâëññü iïiâi+ëññëâiíüi  
iäøañðâðeþi ñi ñðiñðiû eïiçâiñuð çâðââð+ëeâiâ è  
iäiâiâiâðoðiñuâ iäøañðâðeþy aðââiâiâ, çââiâââiâièþ  
âuñiðaâeëe þþââé iïêeíðou ðiâæið, ñëaâñðâðeâi +ââi  
yâeëeññü iäðâcïiââiâe iïiâi+ëññëâiíüð eïeïiâe  
âðâcïuð eïiðoðâða. È yði ñiññiâñðâðaâëi iïyâeâièþ  
iïâuño nëiâ.

Âí âòðîðíé ãëàåâá íàïè èññéåâíàåíú íàëìåííåàíèÿ ïííýòðéÿ **ãíññöååðñöåí**, à òåêæå íàçåâáíèÿ, iiéó+èåñøå ðí æå çíà÷åíèå ñ ðåñþøåðåíèåí ñàíàíðóèéè ñëíåâà.

Â ððåðöüåé æëååå iðñäåæäíà ðåáíðà ïi èññïèåäíåäíéþ  
 íæìåäíåäíéé **äññðäåðñðååííûõ** **äàíèíèññðåðéæäíí-**  
**ðåððéðòíðéåæüíûõ** **íáúååæíåíéé.** Ñëíååå ýðíé iïäåðöiiû ìü  
 ðåçäåéëééé íå ÷åðñðå çåååíà. Â iåðåíî çwene áúééí  
 iïäåååðåíóðí èçþ+åíéþ iæìåííåäíéé, обозначающих **+äññðè**  
**äññðäåðñðåå** (**ñððåíû**). Iïñëäåíèå áúéé èëåññïèðéöéðíåäíú  
 å äåå iïäçååíå:

á) ääìèíèñöðåðéâíí-ðåððéðîðèäéüíüå iæèiaííâäíèý  
Âðíäíèé.

Âi  âðîðii  çàäéââèè  âüïëíèëè  ðàâíðó  ïi  
èññéåâîââièb  iâèïâiââièé  ñeiâ  *âiðiä*  è *ñiâæiûð c num*  
*iïïýðeé*.  Ñeiâà  ýðié  iïäâðoiü  iù  ðâçäåâëëèè  òâè:

à) íàèìåíâàíèÿ ãîðîäîâ;

á) íàèìåíâàíèÿ ïðèëåæàùèô ê åíðiäö ðåððèòîðèü;

â) íàèìåíîâàíèÿ **ìàëîíàñ**

ä) iāēiāiāiāiēy äiðiāä.

*ičia÷apueo næi (aaðaaiy).*

A ÷aoaaadooi çaaeaaeē iiaaaaooaeē enheaaiaaaiēp  
ော်လဲးဘ်လဲးမြို့လဲးမြို့ ော်လဲးဘ်လဲးမြို့လဲးမြို့ ကိုလဲးမြို့ ော်လဲးမြို့ ော်လဲးမြို့

laelalalaaley iollaaooritihx ɬaaitev laaxo naeli e  
äiðiäi.

Äëèíññâðòåðèííäÿ ðääáîðà çàâåðøàåðñÿ áûâîäàìè, êíòîðñâ áûðóåêàþò èç èñïñéåâîññåìèÿ äàííäåñ íàðåðèåëà.

## LUSINE MELS ASHUGHYAN “Settlement” Semantic Field in Armenian

Dissertation for the scientific degree of Candidate of Philological Science  
for specialty 10.02.01- "Armenian language".

The defence will take place on the 21 December, 2012, at 15-00, at the session of Specialized Council of Linguistics 019 of Language Institute after H.Acharyan of NAS of RA.

Address: 15 Grigor Lusavorich str., Yerevan, RA.

## SUMMARY

The theory of semantic field is considered one of the profoundly studied aspects in World Linguistics. In this sense Armenian Linguistics needs a creative possession of the elaborated methodology of General Linguistics. The present work is a decent attempt to satisfy these needs.

The thesis under consideration aims at representing the 'Settlement' semantic field in Armenian in detail, i. e to specify the list of words, etymology, word formation, semantic variations, borrowing principles.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion and a bibliography.

In each chapter we have done

a) word formation analysis of subfield words combining two different theories. One is E. Aghayan's study of compounds stems, the other is G. Labukyan's study of word formation.

b) etymological analysis – taking, into consideration both Armenian and world notorious linguists' etymological surveys.

c) semantic analysis-touching upon word meanings, the changes they have undergone in the course of time, the borrowing principles.

The Introduction defines the subject of the study, dwells on the main topic, purposes and the problems of the research. A number of grave reasons for the necessity of such kind of researches in Armenian Linguistics are stated. The initial methodological approaches and studies to the subject matter are also dwelt upon.

Chapter I is devoted to the study of words denoting "settlement". In the first subchapter we have studied the names of "settlement" as a notion, in the second subchapter we have represented words expressing notions "birthplace" and "homeland".

In the third subchapter we have studied the names of notion “diaspora”

The words of this subgroup form the inseparable part of the word stock of the Armenian language. In the course of time our country, due to its geographical position and economical state was continuously exposed to the invasions of different invaders. This gave rise to the appearance of Armenian colonies which in its turn paved the way for the appearance of such words.

Chapter II analyzes the names of notion "State". We have studied the words the denotative meaning of which is "State", the words which due to generalization have acquired this meaning have also been studied in this chapter.

Chapter III studies the names of regional administrative units of "State". We have divided the words of this subfield into four groups.

In the first subchapter we have analyzed the names of "State" subgroup. We have subdivided them into

- a) names of regional administrative units of reigning countries
- b) names of regional administrative units of Armenia

In the second subchapter we have analyzed words denoting "town" and words denoting notions close to "town". The words of this subchapter are divided into the following subgroups.

- a) "town" names
- b) names of places located close to town
- c) micro region names
- d) road notion names

In the third subchapter we have analyzed names denoting notion "village".

In the fourth subchapter we have studied the names of places located between "village" and "town".

The conclusion summarizes the main outcomes of the study.

